ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 5347
«30» հունիսի 2022թ.

ՕԼԱՆԴԱ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՎԱՐՈՍՅԱՆԻՆ
ՄԵԳԱՕՖԻՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ԱՅԴԻՆՅԱՆԻՆ
ԼԵՎԱՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Օլանդա ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7)-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ» դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում Հայտարարագրի 4.7.3.-րդ դաշտում կատարված նշումն ավելորդ է:

Մեգաօֆիս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության չորրորդ նախադասության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը, միաժամանակ երրորդ նախադասության մեջ գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական:

Լեվան ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության չորրորդ նախադասության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հուլիսի 01-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788